ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№__5209-Ա___ « 19 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով.

1.Վավերացնել Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի 2026-2028 թվականների ռազմավարական և 2026 թվականի տարեկան ծրագրերը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևանի քաղաքապետի
19.12.**2025թ.**
հ. 5209-**Ա որոշման**

Հաստատված է
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
ներքին աուդիտի բաժնի պետ Ա.Վարդանյան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2026-2028ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն

Ներքին աուդիտը անկախ օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Քաղաքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով, ինչպես նաև ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերի ապահովմանը: Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտի վարքագծի կանոններին և ներքին աուդիտի սկզբունքներին համապատասխան:

Սույն ռազմավարական ծրագիրը սահմանում է Քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից 2026-2028 թվականների իրականացվելիք աշխատանքները, աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտի ժամկետները և հնարավորություն է տալիս կազմել ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Ռազմավարական ծրագիրը կրում է ընդհանրական բնույթ և յուրաքանչյուր տարի այն վերանայվում և համալրվում է ևս մեկ տարով: Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Քաղաքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով:

Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է Բաժնի գործունեության հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում են աուդիտի նպատակներին արդյունավետ հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները, իրականացվելիք աշխատանքների բնույթը, դրանց հիմնական նպատակները:

2. Բաժնի առաքելությունը և խնդիրները

«Ներքին աուդիտի մասին» օրենքի համաձայն Բաժինն իրականացնում է երկու կարևորագույն գործառույթ՝ հավաստիացման տրամադրում և խորհրդատվության մատուցում:

Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքը համակարգային մոտեցմամբ իրականացվում է աուդիտի հետևյալ տեսակների միջոցով.

1) համապատասխանության աուդիտ,

2) կատարողականի աուդիտ,

3) համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցություն՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտներ:

Համապատասխանության աուդիտը կամ իրավական աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) կազմակերպության գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու համար: Այս դեպքում, շեշտը դրվում է ոչ միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, այլ նաև օրենքներին, այլ իրավական ակտերին և այլ պայմաններին կազմակերպության գործունեության համապատասխանության վերաբերյալ ղեկավարությանը հավաստիացման տրամադրման վրա:

Կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից: Այն կարող է նաև ընդգրկել ծառայությունների համեմատումը համանման կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների հետ՝ որակի և ծախսերի տեսանկյունից:

Համակարգի գնահատման աուդիտն ընդգրկում է ֆինանսական կառավարման համակարգերի և ղեկավարության կողմից ներդրված ներքին հսկողության համակարգերի մանրակրկիտ գնահատում՝ դրանց արդյունավետությունը և օգտավետությունը ուսումնասիրելու և դիտարկելու նպատակով:

Ֆինանսական աուդիտի նպատակն է գնահատել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրության պահանջներին:

Գնման գործընթացների դեպքում հավաստիացման ծառայությունների միջոցով, հետ հսկողության շրջանակում, աուդիտի է ենթարկվում պատվիրատուի կարիքների համար տվյալ տարվա ընթացքում գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող, ինչպես նաև մեկ անձից կատարվող գնումների առնվազն 30 տոկոսը և գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գնումները:

Խորհրդատվական ծառայությունները ներքին աուդիտորների կողմից մատուցվող այն ծառայություններն են, որոնց ընթացքում նրանք գնահատում են կազմակերպության կառավարչական և ներքին հսկողական գործընթացները կամ դրանց մի մասը՝ արդյունքում տալով դրանց թույլ կողմերի բարելավման անհրաժեշտ ուղղությունները և հնարավոր լուծումները:

Խորհրդատվական ծառայությունների մատուցման համար նշանակված առաջադրանքը բաղկացած է կազմակերպության որոշակի ոլորտի ներքին հսկողության գործընթացների, ռիսկերի կառավարման բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայություններից: Ի տարբերություն համակարգի գնահատման աուդիտի՝ այս դեպքում ուսումնասիրվում է ոչ թե ներքին հսկողական տարրերի գործունեության արդյունավետությունը, այլ տվյալ ոլորտի հետագա հնարավոր նախագծումը:

Խորհրդատվական ծառայություններ մատուցելիս ներքին աուդիտի կողմից տրամադրված առաջարկությունների և խորհուրդների իրագործման վերջնական որոշման կայացումը և պատասխանատվությունն ընկած է կազմակերպության ղեկավարի վրա: Ներքին աուդիտորները պետք է ցուցաբերեն զգուշավորություն ղեկավարության պարտականություններ չստանձնելու համար, ինչի հետևանքով կարող է խախտվել ներքին աուդիտորի անկախությունը և օբյեկտիվությունը: Նման ծառայությունները կարող են ներառել.

1) խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում,

2) օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում,

3) տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն:

Ներքին աուդիտի միջավայրը ընդգրկում է Քաղաքապետարանի աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքները և աուդիտի ենթակա գործընթացները: Ներքին աուդիտի ենթակա միջավայրը ներառում է Քաղաքապետարանի ամբողջ համակարգը (այսուհետ՝ Միավորներ), որոնք ներառում են.

1) մասնաճյուղերը,

2) համակարգի կազմակերպությունները՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ), համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՀՈԱԿ), փակ բաժնետիրական ընկերությունները (ՓԲԸ),

3) հիմնարկները,

4) հիմնական և աջակցող ստորաբաժանումները (վարչությունները, բաժինները),

5) այլ ստորաբաժանումները, գործընթացները, ծրագրերը:

Ռազմավարական ծրագրի կազմման համար հիմք են ընդունվել ինչպես աուդիտի ենթակա Միավորների կողմից լրացված և Բաժնին տրամադրված ռիսկի գնահատման տեղեկագրերը, այնպես էլ իրականացված աուդիտի հաշվետվությունները, եզրակացությունները, բացահայտված խնդիրները և թերությունները, ներկայացված առաջարկությունները, գործողությունների ծրագրերը և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ղեկավարության կողմից ստացված արձագանքները, Բաժնում առկա մարդկային ռեսուրսները և հասանելի մարդ/օրերի քանակը, Բաժնի աշխատողների վերապատրաստումները, ինչի արդյունքում թվով 63 Միավորներ դասակարգվել և ընդգրկվել են 2026-2028թթ. ռազմավարական ծրագրում:

Ռիսկի վերլուծության նպատակով կիրառված չափորոշիչներ

Հ/հ	**Չափորոշիչի տեսակը**
1.	Նշանակելիություն
2.	Ստացված ֆինանսավորման չափ
3.	Հայտնաբերված թերացումներ
4.	Ստացված արձագանք
5.	Այլ մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքներ
6.	Նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ

3. 2026-2028 թվականների ընթացքում ներքին աուդիտի ենթարկվող միավորների ցանկ

Հ/Հ	Աուդիտի ենթարկվող միավորների անվանումը	Աուդիտի անցկացման տարեթիվ	Անհրաժեշտ մարդ/օրերի քանակ	Աուդիտի տեսակը	Ռիսկի աստիճանը
1.	«Երքաղլույս» ՓԲԸ	2028թ.	120	կատարողականի աուդիտ	զգայուն
2.	«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ	2027թ.	100	կատարողականի աուդիտ	բարձր
3.	«Երևանի ավտոբուս» ՓԲԸ	2027թ.	100	կատարողականի աուդիտ	բարձր
4.	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	2026թ.	120	կատարողականի աուդիտ	բարձր
5.	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
6.	«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ	2027թ.	80	կատարողականի աուդիտ	բարձր
7.	«Երևանի «Արշակունյաց» առողջության կենտրոն» ՓԲԸ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
8.	«Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» առողջության կենտրոն» ՓԲԸ	2028թ,	60	ֆինանսական աուդիտ	բարձր
9.	«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ	2026թ.	90	կատարողականի աուդիտ	բարձր
10.	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ	2026թ.	120	կատարողականի աուդիտ	բարձր
11.	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	2028թ.	120	համակարգի գնահատման աուդիտ	բարձր
12.	«Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ	2028թ.	60	համակարգի գնահատման աուդիտ	բարձր
13.	«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	2028թ.	120	կատարողականի աուդիտ	բարձր
14.	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
15.	«Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ	2026թ.	90	կատարողականի աուդիտ	միջին
16.	«Երևանի Աղասի Խանջյանի անվան հ. 53 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
17.	«Ա.Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2026թ.	80	ֆինանսական աուդիտ	բարձր

18.	«Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
19.	«Երևանի գեղասահքի և հոկեյի մարզադպրոց» ՀՈԱԿ	2028թ.	45	ֆինանսական աուդիտ	միջին
20.	«Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
21.	«Երևանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
22.	«Երևանի թենիսի և բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2028թ.	45	ֆինանսական աուդիտ	միջին
23.	«Հայկական ազգային կոխ ըմբշամարտի Երևանի մարզակումբ» ՀՈԱԿ	2028թ.	45	ֆինանսական աուդիտ	միջին
24.	««էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ	2026թ.	90	համակարգի գնահատման աուդիտ	բարձր
25.	«Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ	2026թ.	90	ֆինանսական աուդիտ	բարձր
26.	«Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
27.	«Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
28.	«Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
29.	«Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիրակության կենտրոն» ՀՈԱԿ	2027թ.	30	ֆինանսական աուդիտ	միջին
30.	«Երևանի Կենտրոն վարչական շրջանի թիվ 22 գրադարան» ՀՈԱԿ	2028թ.	30	ֆինանսական աուդիտ	զգայուն
31.	«Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
32.	«Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
33.	«Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն

34.	«Երևանի Վահան Զատիկյանի անվան մարզակումբ» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
35.	«Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
36.	«Երևանի Քանաքեռ-Զեյթունի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
37.	«Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
38.	«Երևանի Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
39.	«Երևանի Նուբարաշենի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
40.	«Երևանի Նուբարաշենի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
41.	«Օքրո Օքրոյանի անվան թիվ 3 գրադարան» ՀՈԱԿ	2027թ.	45	ֆինանսական աուդիտ	բարձր
42.	«Թիվ 10 գրադարան» ՀՈԱԿ	2028թ.	45	ֆինանսական աուդիտ	բարձր
43.	«Թիվ 11 գրադարան» ՀՈԱԿ	2028թ.	45	ֆինանսական աուդիտ	բարձր
44.	«Թիվ 25 գրադարան» ՀՈԱԿ	2027թ.	45	ֆինանսական աուդիտ	բարձր
45.	«Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի կենտրոնացված գրադարանային համալիր» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
46.	«Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 32 գրադարան» ՀՈԱԿ	2028թ.	30	ֆինանսական աուդիտ	զգայուն
47.	«Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի թիվ 34 գրադարան» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
48.	«Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կենտրոնացված գրադարանային համակարգ» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
49.	«Ս. Բարխուդարյանի անվան թիվ 2 արվեստի դպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
50.	«Ա. Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
51.	«Երևանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
52.	«Երևանի Ղ. Սարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
53.	«Երևանի Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
54.	«Երևանի Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր

55.	«Երևանի Ստ. Զրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
56.	«Վ. Մոկացյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	2027թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
57.	«Կ. Օրբելյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	զգայուն
58.	«Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
59.	«Մինաս Ավետիսյանի անվան կերպարվեստի դպրոց» ՀՈԱԿ	2028թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
60.	««Զեյթուն» մշակույթային կենտրոն» ՀՈԱԿ	2027թ.	80	ֆինանսական աուդիտ	զգայուն
61.	««Սեբաստիա» մշակույթային կենտրոն» ՀՈԱԿ	2027թ.	80	ֆինանսական աուդիտ	զգայուն
62.	«Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 5 մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ	2026թ.	60	ֆինանսական աուդիտ	բարձր
63.	«Ռ. Վահանյանի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2028թ.	30	ֆինանսական աուդիտ	միջին

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 2
Երևանի քաղաքապետի
19.12.**2025թ.**
հ. 5209-**Ա որոշման**

Հաստատված է
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
ներքին աուդիտի բաժնի պետ Ա.Վարդանյան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն

Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 974-Ն, 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանների, Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Սույն տարեկան ծրագիրը սահմանում է Քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից 2026 թվականի իրականացվելիք աշխատանքները, աուդիտի ենթակա ոլորտները, աուդիտի ժամկետները:

Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հանդիսանում է Բաժնի գործունեության հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում են աուդիտի նպատակներին արդյունավետ հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները, իրականացվելիք աշխատանքների բնույթը, դրանց հիմնական նպատակները:

2. Բաժնի գործունեության կազմակերպումը և զարգացումը

Բաժնի գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 974-Ն, 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանների, Քաղաքապետարանի կանոնադրության, Ներքին աուդիտի կանոնակարգի, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ներքին աուդիտի հետագա զարգացման համար նախատեսվում է, որ Բաժնի որակավորված աուդիտորները մասնակցեն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվող ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Ստորև ներկայացվում է ներքին աուդիտի բաժինի 2026թ. աշխատաժամանակի ռեսուրսների պլանավորումը՝ մեկ աշխատակցի կտրվածքով.

Հ/հ	Նկարագրություն	Մարդ-օրերի քանակ	Հաշվարկ
1.	Հասանելի առավելագույն ժամանակահատված	252	252 օր*1 աշխատակից
2.	Տարեկան արձակուրդ	(24)	24 օր*1 աշխատակից
3.	Վերապատրաստումներ	(5)	5 օր*1 աշխատակից
4.	Հիվանդություն	(5)	5 օր*1 աշխատակից
5.	Չնախատեսված դեպքեր	(5)	5 օր*1 աշխատակից
6.	Տարեկան հասանելի ռեսուրսներ	213	213 օր/1անձի կտրվածքով

3. Հաշվետվություններ

Աուդիտորական առաջադրանքի հետ կապված հաշվետվությունները լինում են՝ միջանկյալ, նախնական և վերջնական: Բաժինը ներկայացնում է նաև իր գործունեության հետ կապված տարեկան հաշվետվություն:

Միջանկյալ հաշվետվությունները պետք է կազմվեն գրավոր, սակայն հրատապությունից ելնելով ներքին աուդիտորները կարող են մինչև հաշվետվության կազմումը բանավոր տեղեկացնել Քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին: Նման բանավոր տեղեկացումը պարտադիր պետք է փաստաթղթավորվի և հետագայում ներառվի ներքին աուդիտի հաշվետվությունում:

Աուդիտորական արդյունքների ամփոփումից հետո ներքին աուդիտորները կազմում են արդյունքների մասին նախնական հաշվետվություն: Նախնական հաշվետվության կազմման համար հիմք է հանդիսանում վերջնական հանդիպման ընթացքում իրականացված քննարկումների արդյունքները: Նախնական հաշվետվությունը պետք է կազմված լինի հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան: Նախնական հաշվետվության նախագիծը էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին:

Նախնական հաշվետվության վերաբերյալ աուդիտի ենթարկված միավորի ղեկավարը 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Բաժին ներկայացնի իր դիտողությունները և առաջարկությունները:

Բաժինը աուդիտորական առաջադրանքի արդյունքում կազմված վերջնական աուդիտորական հաշվետվությունը տրամադրում է Քաղաքապետին, ներքին աուդիտի կոմիտեին և աուդիտի ենթարկված միավորին:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 12-րդ հոդվածը՝ Բաժնի պետը մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ինչպես նաև Քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին է ներկայացնում նախորդող տարվա ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝ ներածություն, Քաղաքապետարանի ներքին հսկողության գործընթացները, Բաժնի կատարողականը և ամփոփագիր:

4. Ներքին աուդիտի ենթարկվող միավորների ցանկ

Հ/Հ	Աուդիտի ենթարկվող միավորների անվանումը	Աուդիտի տեսակը	Աուդիտի ենթակա ժամանակաշրջանը	Անհրաժեշտ մարդ/օրերի քանակ	Ռիսկի աստիճանը
1.	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	կատարողականի աուդիտ	2024-2026թթ.	120	բարձր
2.	«Ձևավորում և սպասարկում» ՀՈԱԿ	կատարողականի աուդիտ	2024-2026թթ.	90	միջին
3.	«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ	կատարողականի աուդիտ	2026թ.	90	բարձր
4.	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ	կատարողականի աուդիտ	2024-2026թթ.	120	բարձր
5.	««էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ	համակարգի գնահատման աուդիտ	2024-2026թթ.	90	բարձր
6.	«Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	90	բարձր
7.	«Ա.Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	80	բարձր
8.	«Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
9.	«Երևանի հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
10.	«Երևանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
11.	«Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	զգայուն
12.	«Երևանի Վահան Զատիկյանի անվան մարզակումբ» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
13.	«Երևանի Նուբարաշենի մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
14.	«Երևանի Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
15.	«Երևանի Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
16.	«Երևանի Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր

17.	«Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 5 մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ	ֆինանսական աուդիտ	2023-2025թթ.	60	բարձր
18.	Չնախատեսված դեպքերի համար ներքին աուդիտ	Ըստ անհրաժեշտության			
19.	Վերստուգման գործընթաց	Ըստ անհրաժեշտության			

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ